59. ԽՈՌԽՈՌ ԽԱՆՈՒՄ

Կէղնի չէզնի էրիկ ու կնիկմ՝ կէզի։ Էրիկ կէրթա բուրդ կառնե, օր կնիկ ուրին շըլվարըմ գործե։

Կբերե տուն, կասե.— Կնի՛կ, առ ղէդա բուրդ, էնե ընծիկ շըլվարմ՝, հաղնիմ։

Կնիկ լե, կբերե լվանա, կտանի իտա Խոռխոռ խանում, օր գործե։

Կէրթա նստի գետի պռուկ, կասե.—Խոռխո՛ռ խանում, Խոռխո՛ռ խանում, իմ էրկան շըլվարըմ գործե։

Կնստի հար հ՝իրկուն, կասե, չասե, Խոռխոռ խանում ձեն չի տա։

Կասե.— Ի՛մալ կէղնի, էդի չգործե ու ձեն չի տա, ընծիկ զայիր կասե՝ «Հ՝եսօր գնա, վաղ արի»։

Կթալե զկծիկ գետի մեշ ու կհ՝ելնի հիգա։

Օր կիգա, իրիկ կասե.— Տարա՞ր։

Կնիկ կասե.— Հա՛, տարա տվի ու էկա։

Հ՝ըմնօր սապախտան գիշերանց կհ՝ելնի էրթա Խոռխոռ խանումի մոտ։ Կէրթա կանի գետի փըլի վրեն ու կասե.— Խոռխո՛ռ խանում, Խոռխո՛ռ խանում, զիմ իրկան շըլվար հ՝որի՞ն չըս գործի, զիս կծեծե։

Ըստհեղուն ճետ կկանչե։ Կնիկ վերու կասե.— Խոռխոռ խանում, Խոռխոռ խանում, շուտ էրե կէրթամ, Խորոզ խաթուն զիս կկանչե։

Հ՝իրկուն կէղի, թողի հ՝իգա տուն։ Կիգա տուն, կասե իրկան.— Տարա թալեցի էն դեխ, Խոռխոռ խանում ասեց՝ վաղ արի։

Գքնի, կհ՝ելնի սապախտան շուտ, մեկ լե կէրթա, կանի ջրի պռուկ, կկանչե.— Խոռխոռ խանում, Խոռխոռ խանում, դու ինատ ի՞ս էրի ընծիկ, զիմ իրկան շըլվար չըս գործի, կքֆրե ընծիկ· ես լե մեղք եմ, գործե, առնիմ էրթամ։

Կէղի լուսնյակ, դրռ էտ կնիկ կմնա կանուկ դետի պռուկ ու Խոռխոռ խանումի հետ կժղլի։ Կիշքե օր ծանդր բաղբրկան էկավ կհ՝ընցի, բեռներ լե հ՝ըմեն խաս ու խումաշ է բառցուկ։ Դեվե մը հիվանդ կէղի, կմնա քարվնից հետ, կնիկ կտեսնա, կասա.— Խոռխոռ խանում, Խոռխոռ խանում, շուտ էրե էրթամ Դեվա խանում էկեր է իմ հ՝ետևեն, կկանչե, կասե՝ «Արի էրթանք տուն»։

Կքշե զԴեվեն, կառնե հ՝իգա դուռ. կտեսնա օր փակուկ է, կըզարկե կասե.—Մարդ, հ՝ելի զդուռ բաց, զԴեվա խանում ճամբիր էր իմ հ՝տևեն, ի՞նչ, դու դիներ ես կմնենք շըմփլուկ հոն։

Կհ՝ելնի զդուռ բանա, կասա.— Կնիկ, դու բարով, խերով էկար։

Կառնեն էրթան զԴեվեն ներս. կմորթեն, քըռթեն, զմիս կէնին ղաուրմա, զկաշին լե կղոլին, թալին էնդին։

Սապախտան բաղբրկան կհ՝ելնի կտեսնա օր դեվեմ՝ չկա, կասա՝ «Ալավաքի մանցեր է հ՝ետևանց». կդառնա, հ՝իգա, ըռաստ կիգա կնկա մը, կասա.— Մորքուր, մորքուր, բառցուկ դեվեմը չըս տե՞սերի։

Կնիկ կասա.— Չէ՛։

Օր կասա չէ, բաղբրկան կասա.— Քզիկ կիտամ տաս օսկի, գնա էդա քաղքի մեջ, օլբրդի, հարցու տես, վի՞ր տուն դեվի միս կա, ասե. «Իմ տղեն հիվանդ է, կտանիմ իմ տղին», առ ու եկ։

Կնիկն ա, կիգա օլբրդի, կիգա էդ տան հ՝առջև, կանի հարցու, կասեն.— Մըր մոտ կա։

Կհանի զտաս օսկին կիտա, կառնե միս կիգա։

Կառնե միս կհ՝ելնի դուրս օր կիգա, իրիկ էն դիհեն կիգա կըհարցու, կասա.— Էդ ի՞նչ է։

Կնիկ կասա.—Դեվի միս ա, իմ տղեն հիվանդ է, կտանիմ իմ տղին։

Իրիկ կասա.—Կանի քիչմ՝ լե ես իտամ,—կբերե քիչմ՝ լե հ՝ինք կիտա։

Կտեսնա օր կնիկ էրթալու վախտ, ձեռք մրոտեց զարկեց դռան ճակտնոց, զտուն նշնեց ու գնաց։

Կհ՝ելնի մրոտե զուր ձեռք ու սրավարի ղքաղքի դռներու վերև կնշնե, հ՝ինքն ուրեն կասա՝ «Ախբր էդա կնկա տակ բանմ՝ կա, օր

էկավ նշնեց ու դնաց, ես լե հմալ էնիմ, օր չճանչնա իմ տուն ո՞րն է, ո՞ր չէ»։

Կնիկ առավ ղմիս գնաց, դեվաճուն ասաց.— Ջասե՛ս, գացի հ՚ուղեցի, զդուռ նշնեցի ու առա էկա։

Դեվաճին կասա.— Օր նշներ ես, քելե էրթանք, տեսնանը դո՞ր է էդ տուն, առնինք հ՚իգանք։

Էդ դեվի բեռ լև հ՚ըմեն անդին քարեր օր հ՚ըմալ ծանր էր։

Կիգան քաղքի մեջ կօլըրգին, օլըրդին, կտեսնան օր հ՚ըմնու դուռ լե մրով նշնուկ է, չգտնան։ Ջգտնան, ճար ուրանց կկտրի, կթողե դեվաճին կէրթա։

Հըմկա մենք հ՚իգանք վրը էդ իրկան ու կնկան։

Դեվաճին օր կթողե էրթա, իրիկ մեկ լե կբոնե զկնկա յախեն, կասա.—Եդ հ՚իգամ, եդ էրթամ, կէրթաս զիմ շըլվար կառնիս հ՚իգաս։

Իրիկ օր զոր կդնե վրեն, կնիկ կելնի, գիշերանց կէրթա, կասա.— Խոռխոռ խանում, Խոռխոռ խանում, զիմ իրկա շըլվար գործե, առնիմ էրթամ։

Կնստի հար կես գիշեր, լուսնյակ զգլուխ կիտա դուրս, ախըր Խոռխոռ խանում ձեն չի տա։

Խոռխոռ խանումի ճար կկտրի, կասա՝ «Հերիք է էդի հ՚իգա ընձի Խոռխոռ խանում, Խոռխոռ խանում ասա, էդի զիմ խոգին առաղ, էդա անգին քար տանեմ տամ հ՚ինք, առնե էրթա, իմ յախեն ազատի էդոր ձեռքեն»։ Կբերե անգին քար կդնե գետի պռուկ, կըթողե էրթա։

Կնիկ կտեսնա օր քարմ՚ կա դրուկ ջրի պռուկ, կանթեղի պես կփելպըստա։ Կասա՝ «Ի՞նչ խորոտ.ուկ քարմ՚ է, աղեկ սխտորի ծեծոց կէղնի». կհ՚ելնի, առնե հ՚իգա։ Կառնե զքար հ՚իգա, կտեսնա օր իրիկ զդուռ փակեր է։

Կասա.— Իրի՛կ, իրի՛կ, զդուռ բաց։

Իրիկ կասա.—Մեռնիս, դու ներս չէկար. դու պըտի մնաս հ՚ոնի, մեռնիս։

Կնիկ կասա.— Իրի՛կ, իրի՛կ, գդուռ բաց, քզիկ բանմ՚ բերեր իմ։

Իրիկ զբանի անուն օր կլսե, կհ՚ելնի բանա, կհ՚ելնի բանա, կասա.— Էդ ի՞նչ է։

Կնիկ կասա.— Խորոտիկ քարմ՚ է, բերի սխտոր ծեծինք։

Իրիկ կասա.— Շան աղչիկ, ես ասի ի՛նչ էր բերեց։ Առ պահե աղեկ տեխըմ, մարդու նշանց չի տաս։

Կնիկ կվերցու դնե թարջրիկ։

Սապախտան, կհ՝ելնի իրիկ, կէրթա հ՝արա։

Կիգա ամնի ծախող, կանի էդ մարդու դուռ, կասա.—Աման չե՞ք առնի։

Կնիկն ասաց.— Կառնիմ, րի հ՝ուդա։

Առավ զամներ ու էկավ ներս։ Օր կրերե ներս, կասա.— Քեռի, ընձիկ ցորեն չկա, զէդա քար իտամ՝ չի տա՞ս։

Զէ՛, աման ծախող շահրաստա քաղքցի էր, զքար տեսնելու պես ճանչըցավ, ասաց.— Կիտա՛մ։

Կնիկ ասաց.— Ի՛նչ խըդար աման կիտաս։

Մարդն ասաց.— Տաս պուտուկ։

Տվեց զքարն, առավ տաս պուտուկ, բերեց տուն, չորս դին թարշրիկ կապեց դրեց։

Հ՝իրկուն օր էղավ, իրիկ դառցավ հ՝արտեն էկավ, զպուտըկներ օր տեսավ, ասաց.— Կնիկ, էդա ի՛նչ պուտուկ է, ինչո՞վ իս առի։

Կնիկն ասաց.— Զէն քար տվի, առա։

Քֆրեց զկնիկ.—Իշու աղչիկ, մարդ հըմլա բա՞ն կէնե. էդի ան-գին քար էր, դու ի՛մալ տվիր տարավ։ Շռիմ քու պուտըկներու մեջ,— իրիկն ասաց, ու հ՝ելավ հ՝ընկավ պուտկըներու վրեն, ջարդեց դրեց գետին։

Զամներ օր շարդեց խըլըսավ, հ՝ելավ ընկավ ամնի ծախողի հ՝ետևեն, չհասավ, թողեց փոռ-փոշման դառցավ էկավ ետ։ Էկավ ու ղաստվածա գոմի դրեց կնկա գլուխ։ Կնիկ ըռկավ, թողեց ընկավ դուրս, գնաց զինք թալեց գետ։

Իրիկ փոշտմնավ, ճամբեց ղեորոզ խաթուն հ՝ետևեն։

Ասաց.— Գնա ասա, քու կնիկ հանդե խոռխոռ խանումի խետ, զքու շալ կիտա գործել, չի գա։

Աստծուց հ՝իշավ իրեք խնձոր. մեկ ասողին, մեկ լսողին, մեկ լե՝ անկաճ էնողին։